# ՇՆՀԵՐ

Հաբանդ գավառի հնագույն գյուղերից է. պատմական աղբյուրների մեջ հիշատակվում է 10-րդ դարի սկզբից: Ստ. Օրբելյանի ցուցակի մեջ Շնհերի հարկի չափը նշանակված է 24, որն ապացույց է թե գյուղը ոչ միայն Հաբանդ գավառի, այլև ամբողջ Սյունիքի մեծագույն գյուղերից մեկն է եղել իր ժամանակին: Հավանաբար այդ հանգամանքը նկատի ունենալով, հետագայում ոմանք գրել են Շինու հայր և նույնիսկ Հայրաշեն ձևերով. սակայն Ստ. Օրբելյանի մոտ կա միայն երկու ձև Շնհեր և ՇԻՆՈՑ ՀԵՐՔ, արձանագրությունների մեջ ևս միշտ Շնհեր ձևով է գրվել:

Շնհեր գյուղը նախապես պատկանել է Սյունյաց իշխան Փիլիպեին, ապա նվիրել է Տաթևի վանքին, որը կրկին անգամ վերահաստատել է Տարսայիճ Օրբելյանը՝ 1274 թ.: Մինչև 19-րդ դարն էլ համարվում էր Տաթևի վանքի սեփականություն:

Շնհեր գյուղում հաստատվեց սկզբնապես Դավիթ Բեկը:

Գյուղում կան հետևյալ հուշարձանները.

1. «Խաչեր» փոքրիկ գերեզմանատուն, գտնվում է գյուղի մեջ, ուր կան մի քանի խաչքարեր և տապանաքարեր՝ արձանագրված. դրանցից առանձնապես կարևոր է գերեզմանատան հարավային եզրին, մի դարավոր ծառի տակ, մեծ ժայռաբեկորի վրա կանգնած, իր ձևով եզակի խաչքար-կոթող. խաչքարը նավակաձև է, մեջտեղը լայն և թիկունքից կիսաբոլոր մշակված. վերին ծայրում գլխարկի նման ագուցված է բարձ, որի վրա էլի մի մաս, որն այժմ չկա, տակին արձանագրություն է :ՉԺ: թվի: Կոթողի բարձրությունը 3 մետր է և լայնությունը 47 սմ (կենտրոնի լայն տեղում):

2. Կուսանաց անապատ, գտնվում է գյուղի արևմտյան ծայրին, անդնդախոր քարափի գլխին, 5—6 մետր բարձրությամբ պարիսպները շրջափակում են մատչելի տեղերից ընդարձակ բակը, որի կենտրոնում կառուցված է ս. Աստվածածնի անունով ընդարձակ եկեղեցին, որը այժմ էլ կանգուն է. հարավային մուտքի առաջ եղել է փոքր գավիթ, որի պատերն են մնացել. եկեղեցուց քիչ ներքև, ամբողջ մնում է սեղանատունը: Բոլոր շինությունները էլ կառուցվել են հիմնականում 17-րդ դարում:

Ինչպես հուշարձանի պատերին և բակում, այնպես էլ պարիսպների մեջ օգտագործվել են ավելի հին խաչքարեր: Կուսանաց Անապատին վերաբերող արձանագրությունները գրված են մեծ սղումներով, դրանց մի մասը գերադասեցինք թողնել առանց լրացումների, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք մասամբ բարբառի ազդեցություն կարող են լինել:



**137. ՇՆՀԵՐ.** *գյուղամիջի «ԽԱՉԵՐ» կոչվող գերեզմանատանը կանգնած կոթողի տակին. 10 տ.*

Ի ԹՎԱԿԱՆ :ՉԺ: ԵՍ Վ/ԱՐՍԻԼ ՈՐԴԻ | ՊԱՔՈՐՏԱՑ | ԿԱՆԳՆԵՑԻ | ԶԽԱՉՍ ՀԱՒՐ ԵՒ ՄԱԻՐ ԻՄՈ | ԵՒ ԱՑԼՈՑ ՀԱՐԱ'ՉԱՏԱՑ ՑԱՂԱԻԹՍ ՑԻՇԻ.

*Թվականի տասնավորը կարող է Ժ և Զ կարդացվել, այս ոճի Զ հանդիպում է Սյունիքում:*

*ՊԱՔՈՐՏ անունը հնարավոր է նաև ՊԱՔՈՒՐՏ կարդացվել. Ո-ի գլխին գնդակի չարդվածքի տեղ կա, որը վնասել է Ո-ից հետո եկող տառը ևս, որը կարող էր Ե լինել:*

Լուսանկ. տախտ. XIII, 46



138. *Մի խաչքարի ակի մասում. 5 տ.*

։ԶԱ։ ՎԱՍԱԿԱՑ | , ՈՒ ՈՎԱՍԱ|ԲԱ ՑԻՇԵՑԷ|Ք Ի ՔՍ ԱԾ.

*Առաջին տողի թվականի Ա-ն գրված է առանց ակի ստեղի, որն չի կարող ԽԱՉՍ բառի մաս լինել, որովհետև շուրջը բաց տեղեր կան և կարող էին լրիվ գրվել։*

*Լուսանկ. տախտ.* XIV, 49

139. *Մի խաչքարի ճակատին.*



[Թ]Վ ։ՉԻԳ։



140. *Մի խաչքարի ճակատին. 4 տող.*

ԿԱ[Ն]ԿՆՆԵՑԱԻ ՄՐ Խ[Ա]Ջ[Ս] ՊԱՏՈՒԿԱԿԱՆ Ք[Ա]Հ[Ա]-Ն[Ա]ԻՆ. Ի ԹՎ. ։ՈԻԴ։

*Խաչքարն ընկած է հարևան տան բակում.*

*Լուսանկ. տախտ.* XIV, 49

141. *Օրորոցաձև տապանաքարի վրա. 2 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Վ[Ր]ԹԱՆԻՍԻ | ՈՐԴԻ ԷՎԱԶԻՆ. ԹՎ. ։ՌՃՀԴ։

142. *ՇՆՀԵՐ. գյուղամիջի «ԽԱՉԵՐ» կոչվող գերեզմանատուն. մի ընկած խաչքարի ճակատին. 2 տ.*



Կ[Ա]ՆԿՆԵՑ[ԱԻ] ՍԲ Խ[Ա]ՋՍ . . . . . |
ԵՍ.... ՓԱՆՈՒՍ ԲԷԿ . . . . . . . . |



143. *Մի տապանաքարի հարավային կողին. 2 տող.*

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ.| ՆԱՍԻՊԻՆ.

*Արձանագրությունը գրված է թարս ու շիտակ տառերով, աջից — ձախ. (շրջագիր)։*

*Տապանաքարի հյուսիսային կողին քանդակված է հանգուցյալը՝ պառկած և շուրջը կերուխումի տեսարան։*

144. *ՇՆՀԵՐ. կ. ԱՆԱՊԱՏ. եկեղեցու հարավային պատին, դրսից, ագուցված խաչքարի վրա. 4 տող.*



ԹՎ։ ։ՉԼ։ |
ԵՍ ՑՈՀԱՆ ԿԱՆԳՆԵՑԻ ՉԽԱՉՍ ԵՂԲԱԻՐ ԻՄ ՍՆՊԱՏԱ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ | ԻՄ ԹԱՄԱՄԱՑ.

*1—3 տողերի մեջ եղած բաց տարածությունը խաչի տեղն է։*

***145. ՇՆՀԵՐ. Կ. ԱՆԱՊԱՏ. եկեղեցու արևմտյան պատի մեջ դրսից, ագուցված խաչքարի ճակատին. 3 տող.***



ԵՍ ՀՈԳԻԴԵՂ ԿԱ|ՆյԳՆԵՑԻ ԶԽ ԱԶՍ ՀԱԻՐ ԻՄ ԽՈՑԱԴԵՂԱ, ՑԻՇԵՑ|ԷՔ Ի ՔՍ. ԹՎ. :ՉԼ:

*Ջալալյան, Բ. 307. Ալիշան, 259.*
*Լալայան, Դ. 43.*
*Լուսանկ. տախտ.* XIV, 50

***146. ՇՆՀԵՐ. Կ. ԱՆԱՊԱՏ. եկեղեցու հարավային մուտքի կամարակալ քարի վրա. 13 տ.***



Ի ԹՎԻՆ ՏՆ ՄԵՐՈՅԻ | ՔԻ :ՌՋՃՀԶ:ԻՍԿ ՀԱՅՑՆ | ԹԻՒ :ՌՃԻԵ:ԵՂԵՒ ՇԻՆՈՒԹԻ ԵԿՂ,ՑՈՅՍ ԵՒ ԱՐԴ ՄԵՔ ԱՂԱԽՆԵՔ ՈՐՔ ԺՈՂՎԵԼ ԿԱՑՔ ԱՍՏ | ՅԱՆՊՏԻՍ ԹՎՈՎ ԱՆՃԻՆՍ:Զ:ՁԿՆԻ:Կ: ԱՄԱՑ ՇԻ|ՆԹԵ ՏԱՆՍ ՇԱՐԺԵԼ Ի ՀԳՑՆ ԱՑ ՈՄԱՆՔՍ ԱՍԷՐ ՄՀԴ,ՍԻ , . .] ՅԱՆՈՒՆ ՈՐ ԷՐ ՏԵՂԵՒ ՑԱԴՈՒԼՑ . . . . ԵԿԵԼ ԻՒՐ ԿԱՄԱՒ ԱՍՏ | ԿՑԻ . . . . ՀԻՄԵՐ Ի ՏԱՐԻՆ . . . [ՄԻՆ]ՁԵՒ Ի . . . . . . | ԵՒ ԲԱԶՈՒՄ ՊԱՇԽԱՏՈՒԹԵԱՄ]Բ ԵՒ ՀԱԼԱԼ ՎՍՏԿՈՑ ՇԻՆՑ ԶԵԿՂԵՑԻՍ ԱՊՐԵԼԻ :Դ:[ՍԿԻԶԲՆ] ԱՐԱՐ ԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ :Լ: ԿՏՐԵՑ ՎՍ ՈՐՈ ԱՂՁԵՄՔ Զ[ԿՆԻ] ՄԵՐ ԵԿԵԼ ՔԵՐՑԴ ԵՒ [ԿՈՒՍԱՆ]ԱՑԴ ՄԻ ՄՈՌՆԵԼ ԶԵՐԱԽՏՔ . . . . . .

*Ջայնավորների սղումների շատության պատճառով և բնագիրը չխճողելու ինչպես և նրանց մի մասը խոսակցական լեզվի արտահայտություն համարելով, չենք լրացնում պայմանական նշաններով, նույն կերպ ենք վարվում, նման ձևով գրված մյուս արձանագրությունների նկատմամբ ևս։*

*Արձանագրված շատ տեղերում քարը շերտ-շերտ թափված է։ Այդպես վնասված է եղել երևի նաև Ջալալյանի ժամանակ, որը վնասված տեղերը թողնելով՝ մնացածը կցկցելով իմաստը շարադրել է յուրովի, որից և հետագա հրատարակիչները։*

*Ջալալյան, Բ. 308—309։ Ալիշան, 259։ Լալայան, Դ. 41.*
*Լուսանկ. տախտ.* V, 166

**147. ՇՆՀԵՐ. Կ. ԱՆԱՊԱՏ.** *եկեղեցու ներսում, բեմի հյուսիսային կողմի մույթի և խոյակի վրա. 6 տ.*



ՇՆՐՀՕՔ ՍԲ ՀԳՑՆ ՇԻՆՑԻ ՏԻՆՍ ԱՊ ԱԻԻՆ
Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ :ՌՃԻԵ: Ի ՀՐԱ ՊՏՈՒԹ
ՍՐԲՋՆ ՏԵԱՌՆ ՅԿԲՅ | ԵՒ Ի ԹԳՐՈՒԹԵ
ՊՐՍԻՑ ՇԱՀՍՈՒ|ԼԷՄԱՆԻՆ ԵՒ ԱՐՀԵՊՍԻ
ԽՐԿՐԻՈ ՏԷՐ ՈՒՆՑ ՀՆԻՍԻ.

*Սղումները չենք լրացնում պայմանական նշաններով՝ բնագիրը չխճողելու, ինչպես և նրանց մի մասը խոսակցական լեզվի արտահայտություն համարելով։*

*Ջալալյան, Բ. 308։ Ալիշան, 258։ Լալայան, Դ. 43։*
*Լուսանկ. տախտ.* XIII, 47

**148. ՇՆՀԵՐ. Կ. ԱՆԱՊԱՏ.** *Եկեղեցու ներսում. բեմի հարավային կամարի վրա. 15 տ.*



ԱՋԴՄԱՄԲ ՍԲ ՀԳՑՆ ԵՍ ԱՄՆԱ|ՄԵՂՍ
ՄՀԴՍԻ ԱՉՐԻՍ ՈՐ ԵՄ ՏՂԵԱՒ | Ի ՑԳԻԼԵՑ
ԴՇՏԷՆ ԵԿԻ ԺՂՎՐԱ|ՆՍ ԿԱՆՑ ԵՒ ԵՏՈՒ
ՇՆԵԼ ՁԿԵՂԵ|ՑԻՍ, Ի ՁՐՍ ԱՊՐԻԼԻ ՍԿՍՔ
ԵՒ Ի ՍԲՏԵՄԲՐԻ :Լ: ԱՒՐՏՑՔ. ՈՐ ԷՐ
ԱՄԻՆ Ի ԾՆԸՆԴՆԷՆ ՔԻ :ՌՉՃՀՁ: ԵՒ
ԱՂԱՁԵՄ ՁՄՆՍԵՆ|ՍԴ ՈՐՔ ԱՍՏ ԿԱՔ
ՑՂՕԹՍ Ի ՄԷՋ | ՏՃՐԻՍ ՑՇԵԼ ՁՄԵԶ ԵՒ
ԾՆՕՂ|ՍՆ ՄԵՐ ՁՀՑՐՆ ԻՄ ՄՍՀԻՍԻ | ԵԱՐ-
ՂԻԼԻՆ ԵՒ ՁՄՑՐՆ ԻՄ ՀԸ ՌՓՍԻՄԷ ԵՒ
ՁԿՆԿԻՑՆ ԻՄ ՁՈՍԿԻՆ ԵՒ ՁՐԴԻՔՆ ԻՄ
Ձ|ՊՏՐՍՆ ԵՒ ՁԲԵՆԻԱՄԻՆ: ԱՄԷՆ:

*Ջալալյան, Բ. 308. Ալիշան, 259*
*Լալայան, Դ. 43—44.*

***149. ՇՆՀԵՐ. Կ. ԱՆԱՊԱՏ.*** *եկեղեցու բեմի հարավային կողմի մույթի վրա. աստիճաններից վեր. 10 տ.*



ՆՍ ԱՆԱՐԺԱՆ ՄԱՀՏԵՍԻ ԲԻՆԻԱՄԷՆ | ՈՐ ԻՄ ԵՐԿՐԷՆ ԳՈՂԹՆԻՑ ԴԱՇՏԵՆ ԵՒ ԵՄ ՈՐԹԻ ՄԱՀՏԵՍԻ ԱՋԱՐԻՆ | ՈՐ ԵՏ ՇԻՆԵԼ ՏԱՋԱՐՍ. ԵՒ ԵՍ ՆՈՐՈՔԵԱԼ ՍԱԼՆ ՀԻ-ՇԱՏԱԿ ՀՈԳՈՑՍ | ԿԵՆԱԿԻՑ ՄԱՐՔԱՐՏԻՆ, ՀԱՆԳՈՒՑ|ԵԱԼ ԵՂԲԱՐ [Հ] ՄԱՀՏԵՍԻ ՊԵՏ-ՐՈՍԻՆ, | ԻՒՐ ՈՐԹՈՑՆ ՆԻԿՈՂՈՍԻՆ, ՀԱ-ՐԱՊԵՏԻՆ | . ՈՐԴԻՔ ԻՄ ՈՎԱՆԷՍԻՆ, ՄԿՐ-ՏԻՉԻՆ, ԿԱՐԱՊԵՏԻՆ. ԹՎ. :ՌՃԿԹ:

*Երկրորդ տողում ԳՈՂԹՆԻՑ բառից հետո գրված է Ա և ջնջված.*
*Երրորդ տողում ՈՐԹԻ բառի Ո-ն սխալմամբ Ս-է գրված.*
*Վեցերորդ տողում ՄԱՐՔԱՐԻՏ բառի մեջ Ց-ի նմանող դարձ.*
*Յոթերորդ տողում ԵՂԲԱՐ-ից հետո ավելորդ Հ.*
*Վերջին տողը շաղ տված է գրված.*

*Ջալալյան, Բ. 308։ Ալիշան, 259։ Լալայան, Դ. 44.*

***150. ՇՆՀԵՐ. Կ. ԱՆԱՊԱՏ.*** *եկեղեցու ներսում, հարավ-արևելյան ավանդատան բարավորի վրա. 3 տ.*



ՅԻՇ(Ե)Ց(Է)Ք ՈՒՍՏԱ ՄՈՒ(Ր)(Ա)ՏՆ ՈՐ Է ՅԵՐԿՐԷՆ ՔՐԴՍՏ(Ա)ՆԻ

*Բոլոր հրատարակողները այս արձանագրությունը միացրել են նախորդի հետ. սխալ է։*

*Ջալալյան, Բ. 308։ Ալիշան, 259։ Լալայան, Դ. 44*

***151. ՇՆՀԵՐ. Կ. ԱՆԱՊԱՏ.*** *սեղանատան արևմայան մուտքի բարավորի վրա. արտաքուստ. 6 տ.*

ՇԻՆԵՑԱՒ | ԹՎ. :ՌՃԿԹ. | ՅԻՇԱՏԱԿ Է ՍԵՂԱ-ՆԱՏՈՒՆՍ | ՈՐ Ի ԵՐԿՐԷՆ Ի ԳՈՂՏՆԻԵԱՑ | Ի ԳԵՂՋԷՆ ՑՂՆՑԻ ԴԼԱՆԻ ՈՐԴԻ | ՈՀԱՆԷՍԻՆ ԵՒ ԻՐ ՈՐԴԻ ԱԾԱՏՈՒՐԻՆ։



***152. ՇՆՀԵՐ. Կ. ԱՆԱՊԱՏ.*** *եկեղեցու հարավից կից գավթի հարավային մուտքի կողքին ագուցված, ջարդոտված խաչքարի վրա.*

ԹՎ. :ՌՃԻԵ: ՍԲ ԽՉՍ ՅՇՏԿԷ
. . . ԾՆՈՂՑ ԵԱԴԻՆ ԵՒ . . . ԵՊԻՍԿՈՊՈՍ



***153. ՇՆՀԵՐ. կ. ԱՆԱՊԱՏ.*** *արևելյան պարսպի բարձր մասում, գրսից ագուցված խաչքարի շրջանակներին.*

ԵՍ Վ.ԱՍԱԳ.Ս ԿԱ.ՆԳՆԵՑԻ ՁԽԱՉՍ ՀԱԻՐ ԵՒ ՄԱԻՐ
ԵՒ ԵՂԲԱԻՐ ԻՄՈ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*ՎԱՍԱԳՍ—գրված է ՎՍԱԳՍ.*

***154. ՇՆՀԵՐ.*** *գյուղամիջի ս.* ***ՍՏԵՓԱՆՈՍ*** *եկեղեցու արևելյան պատի մեջ ագուցված խաչքարի վրա.*

Ես Աւգուստ կանգնեցի զխաչս տեառն իմոյ Եգեկի եւ որդւոյ իմոյ
Պապկայ հոգւոյն. յիշեցէք ի Քս. թվ. . . . . . . ԿԱ։

*Թվականի հարյուրավորը ջարդված է. այժմ արձանագրությունը բոլորովին եղծված է։*

*Ալիշան, 258*

## Խ Ո Տ

*Հաբանդ գավառի հնագույն գյուղերից է, աղբյուրների մեջ հիշատակվում է 10-րդ դարի սկզբից։ Ստ. Օրբելյանի ցուցակի մեջ գյուղի հարկը նշանակված է 12, որով միջակ գյուղերի շարքում կարելի է դասել։*

*1045 թ. Դվին Խաղբակյան իշխանը Խոտ գյուղը նվիրել է Տաթևի վանքին, որը կրկին անգամ վերահաստատել է Տարսայիճ Օրբելյանը՝ 1274 թ., այդպես էր համարվում մինչև 19-րդ դարը։*

*Գյուղի միջին հին հուշարձաններ չկան. գյուղից մոտ մեկ կիլոմետր հեռու դեպի արևմուտք, Շնհեր տանող ճամփի ձախ կողքին գտնվում են իրար կից երկու եկեղեցիների հիմնապատեր և շուրջը գերեզմանատուն։ Այդ գերեզմանատան մեջ կանգնած և ընկած վիճակում կան խաչքարեր և բավական տապանաքարեր, որոնցից մի քանիսի վրա կան արձանագրություններ։*

*Տեղագրական գրականության մեջ այդ արձանագրությունները բացակայում են։*

***155. ԽՈՏ.*** *գյուղից արևմուտք. հին գերեզմանատան մեջ կանգնած մի խաչքարի ներքևի մասում. 5 տ.*



ԹՎ. ։Զ։Լ։Ա։ ԵՍ ՇԱՐՎԵՆՇԱՀ [ԵՒ] ՇԱՑ
ԿԱ[Ն]ԳՆԵՑԱՔ ԶԽԱՉԱՍ ԵՂԲԱԻՐ ԻՄ
ՇՐՎԱՇԱՀԻ. ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Արձանագրության տառերը շատ երեսանց են։ ԽԱՉԱՍ ձևը չենք ուղղում.*

*Լուսանկ. տախտ.* XIV, 51